ՀԱՆԳԻՍՏ
ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ Տ. ԳՐԻԳՈՐ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ԻԼԽԱԶՅԱՆԻ
(1897—1979)

1979 թ. հունվարի 25-ին Թբիլիսիում, երկարատև հիվանդությունից հետո, վախճանվեց տ. Գրիգոր ավագ քհն. Իլխազյանը:

Տ. Գրիգոր ավագ քահանան (ավազանի անունով՝ Ռուբեն) ծնվել է 1897 թ. Կիրովաբադում, արհեստավորի ընտանիքում: Նախնական կրթությունը ստացել է տեղի ծխական վարժարանում և վաղ հասակից ծառայել իրենց գյուղի եկեղեցում և մասնակցել կրոնական արարողություններին:

1954 թ. ս. Հռիփսիմե վանքում ձեռնադրվել է քահանա՝ ձեռամբ տ. Սահակ արքեպ. Տեր-Հովհաննիսյանի, և ուղարկվել Վրաստան՝ Թբիլիսիի Էջմիածնեցվոց ս. Գևորգ եկեղեցի, որպես հոգևոր հովիվ:

1973 թ. Վրաստանի հայոց թեմական առաջնորդ տ. Գևորգ եպս. Սերայդարյանի միջնորդությամբ իր եկեղեցանվեր գործունեության համար Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսի կոնդակով տ. Գրիգոր քահանային շնորհվում է ավագության պատիվ:

Ս/թ. հունվարի 28-ին, կիրակի օրը, Թբիլիսիի Էջմիածնեցվոց ս. Գևորգ եկեղեցում կատարվում է հանգուցյալ քահանայի վերջին օծման և թաղման կարգը՝ նախագահությամբ տ. Գևորգ եպիսկոպոսի և մասնակցությամբ հոգևորականաց դասի և ժողովրդի:

Հանգուցյալի կյանքի և եկեղեցական գործունեության մասին դամբանական է խոսում սրբազան հայրը՝ վեր հանելով տ. Գրիգոր ավագ քահանայի ծառայությունները եկեղեցուն և իր հավատացյալ ժողովրդին:

Թաղումը կատարվում է Թբիլիսիի Պետրե-Պավլե գերեզմանատանը:

Հանգիստ տ. Գրիգոր ավագ քահանայի աճյուններին: